Յետ այնորիկ ազգ արարին Հայք Դատաւորին 'ի ձեռն Գէորգ Պոտուռայ թէ ոչ համիմք առաջին խոստմանդ, զի բաց 'ի հրովարտակին և այլոց գրոց, գրեալ են նաեւ Փոնորդն և գլխաւորք ազգին մերոյ. լինել հաւասար բաժանորդ ընդ Ցունաց 'ի Բեթղեհէմ եւ յԱստուածածին ըստ մտաց հրովարտակաց, զի այնպէս հրամայեալ է Արքայի չլինել փոքու իւիք նուազ 'ի Ցունաց 'ի նոյն տեղիս, եւ զընդդիմացողն փութով ծանուցանել 'ի Կոստանդինուպօլիս։ Եւ նա ասէ՝ առաւել քան զխոստացեալն իմ ոչ տամ, և եթէ ստիպեալ անպատճառ պահանջեն, յայնժամ մեկուսացեալ 'ի բաց որոշիմ. եթէ պատահեսցի արդեալք ինչ 'ի կողմանէ Ցունաց կամ 'ի Կուսակալէն և յայլոց։ Սովաւ տայր խմանալ թէ՝ Ցոյնք ոչ ունին դադարիլ 'ի յուզելոյ զխռովութիւն. Նմին իրի յակամայս լուեցին Հայք, զի մի զայրացի Նուրի Էֆէնտի և վերստին գրեսցէ 'ի Կոստանդինուպօլիս և գործն երկարեսցի։ Ապա զկնի աւուրց ազգ արար Դատաւորն գլխաւորացն Հայոց, Լատինաց և Ցունաց երթալ 'ի Բեթղեհէմ. Լատինք փակեալ 'ի ներքս յահէ ժանտախտի՝ առաքեցին միայն զԹարգման իւրեանց. իսկ Ցոյնք հրաժարեցան երկիցս և երիցս՝ այլ 'ի պատուիրելոյ և 'ի յորդորելոյ Դատաւորին յանձն առին գնալ, որք էին 1 Եպիսկոպոս, 2 Վարդապետ, գանձապահն Մեսրոպանոս և Թարգման Սախարեայն։ Թէոդորոս Պատրիարք առաքեաց զիոխանորդ Ստեփան Եպիսկոպոս, զՄարկոս Եպիսկոպոս Եւդոկեացի, զնախկին փոխանորդ ծերունի Կիրակոս վարդապետն Մարաշցի, լուսարար Սիմէոն եւ Դիոնէսիոս Վարդապետք, Թարգման Աւետիս՝ Պոտուռեան Գէորգ և այլք. գնացին և այլազգիք։ Դատաւորն Մուսայ Էֆէնտի Խալիսի, Նուրի Էֆէնտի, Քաղաքապետն Ապտիւլ Քէրիմ, Եէնիչերի Աղասի, Միւֆթի Թահիր Էֆէնտի, Նախիպ Օմար Էֆէնտի և այլք 'ի մեծամեծաց քաղաքին, 'ի Կոստանդինուպօլսոյ, եւ 'ի Դամասկոսէ եկեալ Մոսպէրի սպասաւորք և զօրք իւրեանց, և ամենեքեան իրրեւ անձինք 300։ Ի հասանիլ սոցա 'ի Բեթղեհէմ, ընդառաջ ելին 3 ազգք խնկօք եւ մանեղինօք, եւ տարեալ բազմեցուցին 'ի մէջ մեծի եկեղեցւոյն։ Զկնի պատուոյ և մեծարանաց, 'ի բաց եդին զձխափայտսն, և հրամայեցին